

ցան 1630 Յունիս 23ին եւ Սեպտեմբեր 6ին .
յանդեցան այն որոշման թէ տպագրութեան
յանձնելէ յառաջ պէտք է ուղղել մոլար
մտքերը, որոնցմով լի է, կ'ըսեն, այն մա-
տեանը⁴ :

1631/32ին նոյն խնդիրը Ս . Ժողովի առջեւ
կը դնէ նաեւ Յովհ . Մոլինոյ, խնդրանօք որ
աճապարէ Ս . Ժողովը Աստուածաշունչը տպա-
գրելու, վասն զի նոյնին ձեռնարկել կը խոր-
հին նաեւ Տաճկահայաստանի վաճառական-
ները, եւ այն Հոլանդացի մէջ, որ բողոքական
երկիր էր : Այս մասին Ս . Ժողովի 1632,
Փետրուար 3ի Նիստին մէջ կը գեկուցանէ Կար-
դինալ Ուրալդինո⁵ . « Յովհաննէս Մոլինօ,
Վենետացւոց Թարգմանն ի Զմիւռնիա գրած է
նամակ մը, որով կը խնդրէ որ Աստուածա-
շունչը ի Հռոմ տպագրուի, որպէս զի Հայերը,
ինչպէս քիչ յառաջ փորձեցին, զայն հերետի-
կոս Հոլանդացւոց քով տպագրել չտան :

Ս . Ժողովը կը համարէ թէ այս խնդրոյ
մասին լրջօրէն մտածելու է : Մինչ այս, սա-
կայն, որպէս զի Յովհ . Մոլինօ այն Հայերը
այս խնդրոյ մասին յիշեալ հերետիկոսներու
հետ բանակցելէ⁶ ետ կեցընէ, պէտք է անոր

⁴ Prop. Persia etc., an. 1648 inclusive, vol. 209, f. 290.

⁵ Acta S. C., an. 1632—1633, vol. 8, p. 11.
Հմտ. նաեւ Հանդ. Ամս., 1914, էջ 13:

⁶ Ուշագրութեան արժանի է որ նոյն դարուն չուէտ
Թագաւոր մըն ալ, Գուստաւ Ադոլֆ կը ձգտէր Հայոց
հետ յարաբերութեան մէջ մտնել, շահելու համար զա-
նոնք բողոքականութեան : Աս. այս ունիմ Axel Oxen-
stierի մէկ նամակը ուղղուած Peter Falkի ի Հոլանդա